

**ՀԱՎԵԼՎԱԾ 2 «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականի տիպային ձև (ֆիզիկական անձ կամ անհատ ձեռնարկատեր)**

«ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ թողարկած արժեկտրոնային պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարական (ֆիզիկական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի համար)

**Լրացվում է Ներդրողի կողմից**

Հայտը Բանկ ներկայացման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ներկայացնողի անունը (անուն, ազգանուն)	
Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ (անձնագրի համար)	
Անձը հաստատող փաստաթղթի տրման Ամսաթիվը (անձնագրի տրման ամսաթիվը)	
Գրանցման վայրը (գրանցման վայրի հասցեն)	
Ռեզիդենտությունը (ռեզիդենտ/ ոչ ռեզիդենտ)	

Սույն հայտ-հանձնարարականի ներկայացմամբ ընդունում եմ «ԿՈՆՎԵՐՍ ԲԱՆԿ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) առաջարկը, որով և ցանկություն եմ հայտնում ձեռք բերել թողարկած արժեկտրոնային պարտատոմսերը հետևյալ պայմաններով՝

Ձեռքբերվող պարտատոմսերի քանակը՝ հատ (թվերով/տառերով)	
Ձեռքբերվող պարտատոմսերի թողարկման արժույթ	
Ձեռքբերվող պարտատոմսերի ձեռքբերման գինը (թվերով/տառերով)	
Ձեռք բերվող 1 պարտատոմսի ձեռքբերման դիմաց վճարվելիք ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Անձի ԱՄՆ դոլարով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Անձի ՀՀ դրամով բանկային հաշվի համարը Բանկի անվանումը	
Արժեթղթերի հաշիվը Հաշվառող անձի	

անունը	
Արժեթղթերի հաշվի համարը	

Հավաստում եմ, որ հայտ-հանձնարարականը ներկայացնելուց առաջ, ըստ էության, ծանոթացել եմ վերջինիս անբաժանելի մասը հանդիսացող Բանկի պարտատոմսերի հրապարակային առաջարկի Ազդագրին, ընդունում և համաձայն եմ դրանում նշված պայմաններին, ստանձնում եմ այդ պարտատոմսերում ներդրումների հետ կապված պարտականությունները և հնարավոր ռիսկերը:

Տեղյակ եմ, որ արժեթղթերում կատարվող ներդրումները ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափերով երաշխավորված են ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով, ծանուցվել, ստացել և համաձայն եմ Ավանդների հատուցման երաշխավորման պայմաններին ու կարգին:

Հաստատում եմ, որ ֆինանսական միջոցները, որոնք փոխանցվում են Բանկ, ստացված են օրինական ճանապարհով և ոչ մի կերպ կապված չեն ահաբեկչության ֆինանսավորման, թմրանյութերի վաճառքի, մարդկանց վաճառքի, հարկերի վճարումից խուսափելու և այլ հանցավոր գործունեության հետ:

Համաձայն եմ, որ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնություններն առաջնահերթության կարգով լուծվեն Կողմերի փոխադարձ բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Տեղեկացված եմ, որ տասը միլիոն ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթով գումարը չգերազանցող գույքային պահանջի դեպքում ծագած վեճերն ու տարաձայնությունները կարող են լուծվել ֆինանսական համակարգի հաշտարարի միջոցով\*:

Բանկի և Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի միջև կնքված համաձայնագրի համաձայն, Բանկը հրաժարվում է Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից միայն այն գույքային պահանջների մասով, որոնց չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, իսկ գործարքի գումարի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը:

Սույն հայտ-հանձնարարականը Բանկի կողմից ընդունվելու պահից, այն կհանդիսանա Կողմերի միջև կնքված և ուժի մեջ մտած պայմանագիր:

**Լրացվում է Բանկի կողմից**

Հայտի ընդունման ամսաթիվը և ժամը (օր, ամիս, տարի, ժամ)	
Հայտ ընդունող աշխատակցի ստորագրությունը և շտամպը	

Վաճառված պարտատոմսերի ընդհանուր քանակ (թվերով/տառերով)	
Վաճառված Պարտատոմսերի դիմաց գանձված ընդհանուր գումարը (թվերով/տառերով)	
Դրամական միջոցների փոխանցման/ մուտքագրման ամսաթիվը (օր, ամիս, տարի)	
Ստորագրություն (Բանկի լիազորված անձի պաշտոն, անուն, ազգանուն) Կ. Տ.	

**Հիշեցում:** Եթե ներդրողի կողմից պարտատոմսերի ձեռքբերման համար դրամական միջոցները 1930043129906501 (ԱՄՆ դոլարով պարտատոմսերի համար), 1930043123398600 (ՀՀ դրամով պարտատոմսերի համար) հատուկ բանկային հաշվին են փոխանցվում մինչև աշխատանքային օրվա ժամը 16:00-ը, ապա այդ դրամական միջոցները մուտքագրված են համարվում դրանց վճարման օրը, իսկ եթե համապատասխան գումարները վճարվում են աշխատանքային օրվա 16:00-ից հետո, ապա դրանք մուտքագրված են համարվում վճարմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:

\*ՀՀ օրենսդրության համաձայն, անհատ ձեռնարկատերը չի օգտվում իր պահանջները Ֆինանսական համակարգի հաշտարարին ներկայացնելու հնարավորությունից:

